ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5082-Ա «27» դեկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի Հ.4009-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արև Մարգարյանի, Գևորգ, Մարինա և Լիլիթ Բարսեղյանների դիմումը՝ Պ.Տիչինայի փողոց հ.125/1 հասցեում գտնվող բնակելի տան (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18102024-01-0176 վկայական) և Պ.Տիչինայի փողոց հ.141/5 հասցեում գտնվող բնակելի տան (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21052021-01-0330 վկայական) զբաղեցրած հողամասերի համար երկու առանձին վարձակալության պայմանագրեր կնքելու (հողամասը բաժանված է երկու առանձին գույքային միավորների) մասին:

Պ.Տիչինայի փողոց հ.125/1 հասցեում գտնվող բնակելի տան կադաստրային արժեքը կազմում է 1,051,662 ՀՀ դրամ, Պ. Տիչինայի փողոց հ.141/5 հասցեում գտնվող բնակելի տան կադաստրային արժեքը կազմում է 1,070.867 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման հավելվածով.

1. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի «Հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, պայմանագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» հ.4009-Ա որոշումը:

2. Լիազորել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Արև Մարգարյանի, Գևորգ, Մարինա և Լիլիթ Բարսեղյանների հետ կնքել համաձայնագիր՝ 2021 թվականի մարտի 3-ին կնքված վարձակալության հ.441 պայմանագիրը լուծելու մասին և կնքել Պ.Տիչինայի փողոց հ.125/1 հասցեում գտնվող

բնակելի տան զբաղեցրած 75.9քմ և Պ.Տիչինայի փողոց հ.141/5 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 17.2քմ մակերեսներով հողամասերի վարձակալության պայմանագրեր՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով և տարեկան վարձավճարը հաշվարկել համաձայն Երևան քաղաքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի հ. 50-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերությամբ սահմանված դրույքաչափերով:

3. Ընդունել ի գիտություն, որ հողամասերի վարձակալության պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքները՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ